

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Պրոֆ. Էրնստ Մէյնանի «Իսսախօսութիւններ փորձ-
նական մանկավարժութեան մասին» ուսերէն Թարգմանու-
թիւնից հիւսեց

Pessimist.

Հեղինակը ներկայ աշխատութեան մէջ աշխատում է տալ մանկավարժական հետազօտութեան և մեթոդների արդիւնքները ամփոփ կերպով, Մանկավարժութիւնը այժմ էլ գեռ լաւ հետազօտուած գիտութիւն չէ, թէև իւր գոյութեան սկզբից դարեր է բոլորել, սակայն այժմ նա մի նոր շրջան է թեւակոխում — այդ գիտական հետազօտութեան շրջանն է. նախկին մեծ մանկավարժները, որքան էլ սիրով ու մեծ եռանդով են աշխատել, սակայն նրանք եղել են մասամբ ինքնուսններ և գիտական պատ-
րաստութիւն չեն ունեցել, ոմանք էլ ինչպէս Լօկլը, Լէյբ-
նիցը, Կանտը, Ֆրիստէն կողմնակի, անցողակի ձևով իրենց աշխատութիւններում շօշափել են կրթութեան խնդիրը: Միայն XVIII-րդ դարի վերջերում և XIX-րդի սկզբնե-
րում, մեծ մասամբ Պետտալոցցին և Ֆրէբէրը, աշխատել են մանկավարժութեան համար գտնել գիտական հիմքեր: Հերբարտը այս ուղղութեամբ այնպիսի հարցեր մշակեց, որոնք մանկավարժութեան համար գիտական հիմնաքար կարող էին դառնալ: Ի նկատի ունենալով դաստիարա-
կութեան և հասարակական կեանքի մէջ եղած կապերը, մի կողմից մանկավարժը պէտք է հիմնուի հասարակական գաղափարների վերայ, միւս կողմից օգտուի անհատա-
կան, մանկան հոգեբանութիւնից, փորձնական եղանակով, նաև ի հարկէ տրամաբանութիւնից, գեղագիտութիւնից, ևայլն: Որքան և նա օգտուի այս գիտութիւններից, այնու-
ամենայնիւ մանկավարժութիւնը ինքնուրոյն գիտութիւն լինելուց չի դադարի, որովհետև այդ բոլոր օժանդակ գի-

տութիւններին նա մօտենում է այլ հայեացքով, այս դէպքում միշտ ի նկատի է առնում գաստիարակութեան խնդիրը:

Այս աշխատութեան պատճառը եղել են Գերմանիայի զանազան քաղաքներում ուսուցիչների առաջ փորձնական մանկավարժութեան մասին կարգացած դասախօսութիւնները այլ և փորձնական վերաբերմամբ հեղինակի կատարած զանազան փորձերը, յատուկ այս նպատակին ծառայող աշխատանոցներում:

I.

Փորձնական մանկավարժութեան խնդիրը.

Մօտաւորապէս երկու տասնեակ տարի առաջ գիտական մանկավարժութեան մէջ սկսուեց մի նոր հոսանք, որը պէտք է թարմութիւն մտցնէր. այս հոսանքը փորձնական մանկավարժութեան շնորհիւ առաջ եկաւ. որոշ համակարգութեամբ գիտողութիւններ անելը և փորձնային մեծ արժէք ստացան, որ ճիշտ կլինէր գիտութիւնը իւր գործադրած մեթոդի պատճառով փորձնական մանկավարժութիւն անուանելը:

Փորձնական մանկավարժութեան խնդիրն է նոր ձեռով հիմնաւորել գիտական մանկավարժութիւնը: Այս դէպքում ամենից առաջ օգնութեան է դալի փորձնական հոգեբանութիւնը, որը փորձնական մանկավարժութեան հոգեւոր մայրն է. նոր գիտական ուղղութիւնները միանգամից չեն ծագում. նրանք նախկին իդէաների աստիճանական զարգացումն են: Փորձնական մեթոդը փոխ առաւ հոգեբանութիւնից և հնարաւոր եղաւ այսպիսով բոլորովին նոր տեղեկութիւններ ու ծանօթութիւններ ձեռք բերել հոգեկան կեանքի մասին ընդհանրապէս՝ նախկին հոգեբանութեան տուած որոշումները հոգեկան կեանքի զանազան երևոյթների մասին այժմ նոր ձեւակերպումն ստացան: Շատ բնական էր, ի հարկէ, փորձնական հոգեբանութեան մեթոդներով ուսումնասիրել նաև մանկան հոգեկան կեանքը, նախկին մանկավարժները մեծ մասամբ իրենց տեղեկութիւն-

ները հիմնում էին կամ իրենց պատահական դիտողութիւնների վրայ կամ, ինչպէս Ռուսոն, իրենք իրենց երեւակայութեամբ մանկան տեղ էին դնում և աշխատում էին պատկերացնել, թէ այս կամ այն դէպքում մանուկը մտաւորապէս ինչպէս կ'մտածէր, կզգար և այլն։ Ամենից շատ Պետալոցցին կարող է ժամանակակից մանկավարժութեան նախորդ համարուել, որովհետև նա իրօք աշխատում էր մանկավարժութեան գործադրած մեթոդները գործնական կեանքում քննութեան ենթարկել և ճշտել։

Ժամանակակից մանկավարժութեան հետազոտութեանը նպաստել է թոյլ, հիւանդոտ ու աննորմալ մանուկների վերաբերմամբ եղած յատուկ ուսումնասիրութիւնը, այդ ուսումնասիրութեան հետեանքը եղաւ օժտուած լիւնելը որոշելու գիտական ուսումը և յատկապէս մտաւոր ընդունակութիւնները փորձելու խնդրի առաջ գալը։ Այս խնդրի հետ սերտ առնչութիւն ունի նաև մանուկի դպրոցական աշխատանքի հոգեկան առողջութեան հարցը։

Այս բոլոր խնդիրներն էլ մի կողմից ուսումնասիրում են բժիշկները, միւս կողմից դասատուները, փորձնական մանկավարժութիւնը այս ուսումնասիրութիւնները ի մի է հաւաքում և ծառայեցնում գործնական և տեսական նպատակների։

Նախկին մանկավարժութիւնը մինչև մեր օրերը, մասամբ վերացական, մասամբ նօրմատիւ բնոյթ ունէր, իւրաքանչիւր մանկավարժ աշխատում էր որոշել կրթութեան, գաստիարակութեան գաղափարները, նպատակները և բացատրում էր այն օրէնքները, որոնց հիման վրայ պէտք էր սովորեցնել և կրթել։ Այդ օրէնքները կամ մանուկի վարքին էին վերաբերում, կամ ուսուցչի գործելակերպին և կամ թէ որոշումէին ուսուցման այս կամ այն ձևը և թէ ինչպէս պէտք է կազմակերպել դպրոցական գործը։ Այս բոլոր օրէնքները և ձևերը միայն տրամաբանական կառուցումներ էին կամ քմահաճոյքից բղղխած պահանջներ, որոնք գիտականօրէն հիմնաւորուած չէին, օրինակ չէին որոշում, թէ ինչո՞ւ մանուկը այս ձևով

պիտի սկսի ընթերցանութիւնը և փորձուի, հարկաւոր է նախ որոշել մանուկի ընթերցանութեան մեխանիզմը ինչպէս է կատարուած, ինչ աստիճաններով է անցնում ընթերցանութեան իւրացումը, որոնք են բնական պայմանները և մանուկի մտաւոր զարգացումի հետ ինչ առնչութիւն ունին, նոյն հարցերը ծագում են և սւսուցչի գործունէութեան նկատմամբ, դպրոցի կազմութեան նըկատմամբ և այլն: Նախկին մանկավարժութեան մէջ այս հարցերի նկատմամբ շատ քիչ տեղեկութիւններ կգտնենք, նոյն իսկ Ռուսոն և Հերքարտը մեծ սխալների մէջ էին ընկնում մանուկի հոգեկան կեանքի և ֆիզիքական զարգացման պայմանների ուսումնասիրութեան գէպքում: Նախկին մանկավարժութիւնը փորձնական հիմք չունէր և այդ պատճառով երբէք սւսուցչի համար պարզ չէր՝ թէ ինչո՞ւ նա այսպէս պէտք է վարուի և ոչ այլ կերպ: Ներկայ մանկավարժութեան մեծ արժէքն հէնց այն է, որ նա աշխատում է ամեն մի դաստիարակի հնարաւորութիւն տալ պարզ հաշիւ տալու իրեն իւր գործադրած մանկավարժական միջոցների վերաբերմամբ, դաստիարակի ինքնուրոյնութիւնն մեծանում է այսպիսով և սէրն էլ գէպի գործը աւելանում:

Մեր ժամանակի մանկավարժը դեռ ևս շատ քիչ ինքնուրոյնութիւն է զարգացնում՝ կրթուող մանուկ սերունդի մէջ, ընդհակառակը աւելի ճնշում է մանուկների ազատ աշխատանքը և ստիպում է հետեւել դրուած օրէնքներին ու կարգերին: Ազգի հոգեկան ու տնտեսական զարգացման համար կարեւոր է հէնց դպրոցական հասակում մանուկների մէջ զարթեցնել ինքնուրոյն ոյժերը, նրանց սէրը գէպի այս կամ այն աշխատանքը: Այդ նըպատակով էլ փորձնական մանկավարժութիւնը աշխատում է նախ ըստ ամենայնի հետապնդել ուսուցման իրական պայմանները և ապա տալ մի ուղեցոյց կամ օրէնք: Փորձնական մանկավարժութիւնը հէնց նրա համար էլ փորձնական է կոչւում, որ նրա էական կողմը փորձն է կազմում, որի շնորհիւ շատ նորութիւններ են առաջ եկել այդ գի-

տութեան մէջ։ Ուսումնասիրում է մանուկի հոգեբանութիւնը մանկավարժութեան տեսակէտից, քննում է մանկավարժական մեթոդները նոյնպէս այս տեսակէտից, թէ արդեօք, որ մեթոդը աւելի ձեռնատու և օգտակար է և ոչ թէ տեսականապէս է հիմնաւորում այս բոլորը։

Ամեն մի փորձնական հետազոտութիւն հիմնւում է դիտողութեան վրայ։ Դիտողութիւնը ուշադրութեամբ դիտական նպատակով կատարուող, որոշ ծրագրով եղող զգացողութիւններ ընդունելն, ստանալն է։ Ամեն մի փորձնական դիտութիւն ելակէտ է ընդունում արտաքին կամ ներքին զգացողութիւններ ստանալը, հարկաւոր է միայն, որ այդ լինի որոշ հասկարդութեամբ, առանց բացերի և որոշ նպատակների ուղղութեամբ։ Դիտական դիտողը ունենում է դիտողութեան որոշ մեթոդ, որոշ նպատակ, ոչ ոք կասկած չէ յայտնել, որ արտաքին զգացողութիւնները կարելի է դիտել և փորձի ենթարկել, սակայն միշտ էլ վէճի առարկայ է եղել ինչպէս ինքնադիտողութիւնը, այնպէս և հոգեկան գործողութիւնները փորձի ենթարկելու հնարաւորութիւնը։ Ինքնադիտողութեան շնորհիւ հնարաւոր է ուղիղ բացատրել ուրիշների վրայ կատարած դիտողութիւնը։ Իսկապէս ասած դիտել ուրիշի հոգեկան կեանքը դժուար է, այս դէպքում օգտւում ենք այդ ուրիշի տուած ինքնադիտողութեան արդիւնքից և կամ մենք միայն բացատրում ենք նրանց ցուցումները։ Ինքն իրեն դիտող մարդուն, որը մեզ ցուցումներ է անում, մենք յայտնում ենք, թէ ինչպէս ենք հասկանում իւր ասածը մինչև այն ժամանակը, երբ նա համաձայնում է, որ իրեն ուղիղ ենք հասկանում։

Մանկավարժութեան մէջ ինքնադիտողութիւնը և դիտողութիւնը շատ աւելի դժուար է, որովհետև այստեղ գործ ունինք այնպիսի դիտակցութեան հետ, ինչպիսին մանկանն է, որը էապէս զանազանւում է հասակաւորի դիտակցութիւնից, այստեղ մասամբ օգնութեան է գալի մեր անցեալ մանկական յիշողութիւնը, որի բացակայութեան դէպքում մանուկի ասածները, խօսածները մեզ

համար միայն առեղծուածներ կերեային: Աւելի մեծ չափով դեր խաղացողը այս խնդրում մանկավարժական փորձըն է, որը մեծ մասամբ հոգեբանական փորձ է:

Փորձը կատարելագործուած, ուժեղ դիտողութիւնն է, երբ աշխատում են փորձուելիք երեղթը ենթարկել իսկական վերստուգութեան: Փորձի համար հարկաւոր են՝ 1) ստեղծել այնպիսի պայման, որ ըստ ցանկութեան առաջ բերուի հետազօտութեան ենթարկուելիք գործողութիւնը, 2) փորձողի ցանկութեան համաձայն փոխել այդ գործողութիւնը, այդ հնարաւոր է ի հարկ է փորձուելիք գործողութեան մէջ նոր տարր մտցնելով կամ եղած տարրերից մի քանիսը առանձնացնելով, 3) Գործողութեան մէջ այս կամ այն ձևով փոփոխութիւն առաջ բերելը պէտք է դիտական նպատակով լինի, 4) Դիտողութեան ենթակայ գործողութեան քանակական որոշումը և չափելը՝ այսինքն քննուած երեղթը արտայայտել թուով և համեմատել մի ուրիշի հետ: Այս բոլորը վերաբերում են վերլուծական փորձին, համադրական փորձի միջոցով մասամբ վերլուծականը վերստուգւում է, մասամբ էլ լրացւում: օրինակ երբ օրուայ սպիտակ լոյսը պրիզմայի միջոցով բաժանում ենք լոյսի շերտերի և ապա հաւաքող ապակու միջոցով միացնում և ստանում կրկին օրուայ սպիտակ լոյս, առաջին դէպքում վերլուծութիւն է կատարւում, երկրորդ դւում՝ համադրութիւն:

Հարց է՝ թէ որքան հնարաւոր է ըստ ցանկութեան հոգեկան գործողութիւնների առաջ բերել ուրիշի մէջ: Այժմ՝ արուեստական կերպով հնարաւոր է համարեա ամեն տեսակ հոգեկան գործողութիւն առաջ բերել, օգտուելով որոշ գրգիռներ առաջ բերելու հնարաւորութիւնից, օրինակ՝ եթէ ուզում ենք մէկի մէջ դառը համի ղգացումը առաջ բերել, հարկաւոր է նրա լեզուին որոշ չափով խինին դնել, կամ բանականութեան ղգացում՝ հարկաւոր է որոշ գոյներ, որոշ ձայներ համադրել, ի նկատի պէտք է ունենալ և այն հանգամանքը, որ փորձի ենթարկուողը այս բանի համար տրամադրութիւն ունենայ: Մտապատ-

կերներու առաջ բերելու համար փորձուողին հարկաւոր է ասել որոշ բառեր, որոնցից ստացած տպաւորութիւնը նա արտայայտում է կամ բառով կամ որ և է շարժումով: Փորձի ենթարկուում են ընդհանրապէս երեւոյթները ամենապարզ ձևի և ամենատարրական պայմաններում, որովհետեւ փորձի նպատակն է ծանօթանալ հոգեկան կեանքի հիմքերի հետ, որից յետոյ դրանց կարելի է միացնել համադրական փորձի միջոցով:

Որքան և դժուար է հոգեկան կեանքում պռանձին երեւոյթները անջատել, այնուամենայնիւ մեր հոգեկան այն յատկութեան շնորհիւ, որ երբ մի բան մեր լարուած ուշադրութեան առարկան է դառնում, հոգեկան միւս տպաւորութիւնները թուլանում են, հնարաւոր է լինում փորձի ժամանակ զանազան միջոցների դիմելով որոշ չափով առանձնացնել հետազօտուող երեւոյթը. օգտուում են նաև հիպնոտիզմով, թէև այս միջոցը բնական չէ, որովհետեւ չի կարելի ճշտօրէն հետևել գիտակցութեան ընթացքին, քանի որ հոգեկան կեանքը շատ փոխուած է լինում այս դէպքում:

Խոստովանել պէտք է հէնց սկզբից, որ հոգեկան երեւոյթները չափել անկարելի է. չափը և թիւը դորժադուում են միայն քանակական մեծութիւնների համար, ժամանակի և տարածութեան մէջ, իսկ հոգեկան երեւոյթները միայն որակական տարբերութիւններ ունին: Մեր զգացողութիւնները լինում են ամուր, փափուկ, կարմիր, կապոյտ, դառը, քաղցր, մեր զգացումները՝ հաճելի կամ անհաճոյ, որոնց մէջ քանակական տարր չկայ. ծիծաղելի է ասել ի հարկէ, որ հաճելի զգացումը տասը վերջով երկարութիւն ունի: Հոգեկան երեւոյթները փորձելու դէպքում մենք նրանց արտաքին, ֆիզիքական կողմն ենք չափում, որոնք կատարւում են արտաքին աշխարհում, իսկ հոգեկանը միայն կողմնակի միջոցով ենք որոշում, ինչպատի ունենալով այն կապը, որ նա ունի ֆիզիքական երեւոյթի հետ:

Մանուկի հոգեբանութեան և մանկավարժութեան մէջ

Համադրական փորձը շատ աւելի մեծ դեր է խաղում, քան հասակաւորի հոգեբանութեան մէջ, որովհետեւ հարկաւոր է աւելի բարդ հոգեկան երևոյթներ հասկանալ և կարեւոր է զուտ անհատական պայմանների հետ ծանօթանալ։ Օրինակ՝ երբ վեր ենք լուծում մանուկի կարգալու գործողութիւնը, գտնում ենք նախ դիտողական երեւոյթ—իւրացումն, ըմբռնումն քառերի մաքրի, և վերջապէս տեսողական պատկերների հնչիւնների վերածելը, խօսելը, արտայայտելը։ Համադրական փորձը աշխատում է պարզել, թէ ինչպէս են գործում այդ տարրերը միասին և այս քանը մանկավարժութեան համար աւելի կարեւոր է, որովհետեւ կարգալ տախտակներու համար որոշ մեթոդ որոշելու ամենակարեւոր պայմանն է այդ։

Մանկավարժական փորձը նոյն հոգեբանական փորձն է, միայն կատարում է դպրոցում սովորողների վերաբերմամբ, հարկաւոր է ի նկատի առնել երկու խոշոր հանգամանք, որ նախ պէտք է մանուկը որոշ չափով ըմբռնէ փորձողի նախառակը, մի քան, որ բաւական դժուար է մանուկների համար և ապա, որ վերջիններս խիստ ենթակայ են ներշնչման և հեշտութեամբ ենթարկում են փորձողի մտադրութիւններին։

Առաջին պայմանը ի նկատի ունենալով հարկաւոր է ասել, որ փորձի ենթարկել կարելի է որոշ տարիք ունեցող մանուկների, 4—5 տարեկան մանուկների վերաբերմամբ որոշ փորձեր շատ սահմանափակ չափերով կարելի է կատարել, թէ՛ մանուկի հոգեկան կեանքը ընդհանրապէս պարզ է և կատարուող փորձերն էլ տարրական հոգեկան երևոյթների են վերաբերում։ Ներշնչման առաջն առնելու համար պէտք է իմանալ մանուկների հետ վարուելու եղանակը, այլ և պարզ փորձերով արագաբանել ներշնչման աստիճանը։

Այսպիսով փորձերը մեզ ատկաւորում են փնտրել որոշ կարգով փաստեր, հնարաւոր են դարձնում դիտողութեան ենթակայ երևոյթը անթիւ անգամ կրկնել, մի փորձողի արած փորձերը կարելի է վնում ուրիշ փորձողի փորձե-

յով վերստուգել և վերջապէս հնարաւոր է դառնում ընդհանուր աշխատանք սկսելը։ Այս է պատճառը, որ հէնց որ որ և է գիտութիւն փորձնական է դառնում, ընդհանուր աշխատանք է սկսւում, որովհետեւ նախորդի կատարած փերձերից օգտւում է յետնորդը։

Ծնորհիւ փորձի մանկավարժութեան մէջ բոլոր հարցերը աշխատում են վճռել ելակէտ ունենալով մանկանք։ Մանկավարժութեան մէջ հետազօտութեան երեք մեծ շրջան կայ՝ մանուկի վարքը, ուսուցչի գործունէութիւնը և դպրոցական միջոցները, պիտոյքները, կազմը և այլն։ Այս հարցերը վճռելու համար հարկաւոր է ինկատի ունենալ օրինակ՝ թէ դասատուի այս կամ այն մեթոդը ինչպէս է ազդում սովորող մանուկի վրայ, կամ այս կամ այն դասագիրքը, դասական առարկան սրբան նպաստաւոր են մանուկի դաստիարակութեան յառաջադիմութեան համար։ Այսպիսով փորձնական մանկավարժութեան մէջ հետազօտութեան արժանի են հետեւեալ կէտերը՝

1) Փորձնական մանկավարժութիւնը ուսումնասիրում է ա) մանուկի մարմնական ու հոգեկան զարգացումը դպրոցական կեանքի ընթացքում, մանուկի ուսումնասիրութիւնը պէտք է ամբողջ մանկավարժութեան հիմք լինի, երբ որ և է մանկավարժական պահանջ է դրւում, անհրաժեշտ է ինկատի ունենալ թէ մանուկի հոգու մէջ ինչպիսի տարր ենք ինկատի ունեցել, պէտք է որոշել՝ թէ մանուկի զարգացումը հաւատար չափով է առաջ գնում թէ թափշքներով, բ) թէ ինչ կապ կայ մանուկի մարմնական և հոգեկան զարգացման մէջ, որովհետեւ այդ երկուսը միշտ զուգահեռաբար չեն առաջ գնում, որոշ մարմնական օրդաններ թէեւ զարգանում են, բայց երբեմն համապատասխան հոգեկանները ետ են մնում կամ ընդհակառակը, գ) թէ ինչպիսի տարբերուող բնորոշ գծեր ունի մանուկը իւր զարգացման զանազան աստիճաններում հասակաւոր մարդուց և ինչպէս աստիճանաբար մտնում է վերջինիս, դ) թէ ինչ շեղումներ է ունենում մանուկը սովորական տիպի զարգացու մից, այսպիսով էլ հնարաւոր

է դառնում որոշել միջին կամ բնական մանկան զարգացումը, այս դէպքում է ահա պարզում, թէ ով է շատ զարգանում, ով է օժտուած և ով՝ բութ:

2) Երկրորդ խնդիրն է որոշել երեխաների զանազան հոգեկան ընդունակութիւնների զարգացումը. օրինակ զգայութեան, երևակայութեան, յիշողութեան, մտածողութեան և այլն. որոշ տարիներում այս ընդունակութիւններից մի քանիսը արագ են աճում, միւսները ետ են մնում:

3) Բացի այս պէտք է պարզաբանել մանուկների անհատականութիւնը, թէ ուրքան մի մանուկ միւսից տարբերում է և ինչ անհատական կողմերով:

4) Այստեղից առաջ է դալիս մանուկի օժտուած լինելու հարցը գիտնականօրէն ուսումնասիրելու հնարաւորութիւնը:

5) Այս բոլորը ի նկատի են առնւում ոչ թէ ընդհանրապէս մանուկների վերաբերմամբ, այլ միայն դպրոցում սովորողների նկատմամբ, պէտք է ուրեմն որոշել. ա) մանուկի դպրոցական աշխատանքի տեխնիկան ու մեթոդը, բ) կարելի է նաև ամեն մի աշխատանք առողջապահական տեսակէտից քննել. մտաւոր աշխատանքը նոյնպէս յոգնեցնում է, ինչպէս և ֆիզիքականը, հարկաւոր է ուսումնասիրել՝ թէ ինչ պայմաններում է եռանդ գործ դրւում. ինչպէս կարելի է այդ եռանդը վերականգնել, ինչպէս է յոգնածութիւն առաջ գալիս և ինչպէս պէտք է դրա առաջն առնել. մտաւոր յոգնածութեան խնդրի որոշման դէպքում, որքան աշակերտի շահն է ի նկատի առնւում, նոյնքան և ուսուցչինն պէտք է հաշուի առնել. դ) պէտք է որոշել մանուկի աշխատանքի և դպրոցի կազմի մէջ եղած յարաբերութիւնը՝ թէ արդեօք մանուկը դպրոցում ընկերների հետ աւելի լաւ է աշխատում, թէ տանը միայնակ:

6) Հարկաւոր է ուսումնասիրել ոչ միայն ընդհանրապէս մանուկի աշխատանքը, այլ նաև ամեն մի դպրոցական առարկայի համար գործ դրած աշխատանքը մասնաւորապէս, այս նպատակի համար հարկաւոր է վերլու-

ծել մանուկի կատարած աշխատանքը և ուսուցչի դործ դրած մեթոդը և որոշել՝ թէ ինչ ազդեցութիւն է ունենում այս կամ այն մեթոդը:

7) Վերջին խնդիրն է ուսուցչի դործունէութեան հետազոտութիւնը. հետազոտելով այս կամ այն մեթոդը՝ որոշում է թէ ինչպէս պէտք է վարուի ուսուցիչը որ և է առարկայ աւանդելու դէպքում:

Ի նկատի ունենալով փորձնական մանկավարժութեան ուսումնասիրութեան նիւթը պէտք է խոստովանել, որ ոչ բոլոր մանկավարժական հարցերը հնարաւոր է փորձի միջոցով լուծել. օրինակ՝ ուսուցման կամ դաստիարակութեան ընդհանուր ու մասնաւոր նպատակները որոշում են պետութիւնը և հասարակութիւնը միասին՝ ի նկատի ունենալով ժամանակի կուլտուրայի զարգացման աստիճանը. յաճախ ի հարկէ հաշուի են առնում նաեւ դործնական նպատակներ. Այս պատճառով դաստիարակութեան և կրթութեան նպատակների մեծ մասը մանկավարժութեան մէջ չեն ուսումնասիրւում: Մանկավարժութիւնը միայն կարող է որոշել, թէ այդ նպատակները համապատասխանում են արդեօք մանուկի բնաւորութեանը, այլ և մանկավարժութիւնը կարող է որոշել ինչ ճանապարհներով հասնել այդ նպատակներին:

(շարունակելի)

Pessimist.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՒՋԷՅ.

Արարատի այս տարուայ յունուարի համարում տըպուած յօդուածիս մէջ յիշել էի, որ մեր հասարակութիւնը դէպի դպրոցական խնդիրը հարկաւոր հետաքրքրութիւն է ցոյց տալիս: Այս վերջերս կատարուած կտակները պարզօրէն այդ են ապացուցած: Այդ կտակներից մէկը շատ ուշադրաւ է, որովհետեւ անմիջօրէն կապւում է դպրոցական խնդրի հետ և կոչուած է որոշ չափով լրացնելու այն